Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ախպրաձոր գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի /19 դասաժամ/ թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է 2 փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/
2. Փաստաթուղթ /դիպլոմ/ Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ
3. Անձնագրի պատճենը
4. Ինքնակենսագրություն
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ:
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

   Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

   Փաստաթղթերը ընդունվում են 2022թ. ապրիլի 13-ից մինչև ապրիլի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

   Մրցույթը տեղի կունենա 2022թ. ապրիլի 28-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ախպրաձոր գյուղի միջնակարգ դպրոցում:

   Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ախպրաձոր, 1-ին փողոց, շենք 1:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ախպրաձոր գյուղի միջնակարգ դպրոցի տնօրինություն

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093-64-63-40 հեռախոսահամարով: